Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հենց սկզբից ասենք, որ ճիշտ է և խրախուսելի համապատասխան կազմակերպությունների քաղաքականությունը՝ հայկական բնաշխարհում եղած օտարածին տեղանունները հայկականով փոխարինելը։ Այդ խելամիտ քաղաքականության հետևանքով աստիճանաբար հնարավոր եղավ ազատվել, օրինակ, Աղջաղշլաղ, Քյափանակ, Իթղռան, Բաբըռլի, Բողազքյասան, Դալիղարդաշ, Բոզքյոյ, Իլանչալան, Թոխանշալու, Դուխարաբ և այլ՝ այս կարգի «գոհարներից» և ունենալ սեփական սեփական ծագում ունեցող գեղեցիկ ու բարեհնչյուն անվանումներ։

Ամբողջ հարցը, սակայն, այն է, որ այս անվանափոխության կապակցությամբ թույլ է տրվում մի էական սխալ, որն, ի դեպ, այսօր էլ շարունակվում է, և որի վրա կամենում ենք ուշադրություն հրավիրել։ Բանն այն է, որ տվյալ տեղավայրի օտարազգի անվանումը փոխելիս, անպայման անհրաժեշտ է վերականգնել նրա նախկին՝ բուն հայկական անվանումը, որը հասարակական-քաղաքական ինչ-ինչ պայմանների հետևանքով մոռացության է մատնված եղել։ Այսպես մոտենալու դեպքում՝ թե կհեշտացվեն «անվանափոխության» հետ կապված այլ աշխատանքները, և թե այն կունենա իր համապատասխան պատմական արդարացումն ու պատճառաբանվածությունը։ Մինչդեռ այս կարևոր հանգամանքը, չգիտես ինչու, մշտապես աչքաթող է արվում։

Բերենք միայն երկու փաստ։

Սևանի շրջանում գտնվում է հայկական հինավուրց գյուղերից մեկը՝ Թեժառույգը, որի կողքով առ այսօր էլ հոսում է Թեժ գետը։ Թուրքական տիրապետության ժամանակ վերջիններս անկարող եղան ճշգրիտ արտաբերել գյուղի «Թեժառույգ» անունը, և դրա հետևանքով էլ նրան կնքեցին «Թայչարուխ» ձևով, որը, ի դեպ, ոչինչ ընդհանուր չունի ոչ «թայի» և ոչ էլ «չարուխի» հետ։ Եվ ահա 1946 թվականին, երբ կարիք զգացվեց փոխել գյուղի «Թայչարուխ» անբարեհնչյուն անունը, համապատասխան կազմակերպությունները նախկին պատմական «Թեժառույգ» անունը վերականգնելու փոխարեն, չգիտես ինչու, նրան տվեցին նոր՝ «Մեղրաձոր» անունը։ Իհարկե, Մեղրաձորը

նույնպես բարեհնչյուն է, հայկական և գեղեցիկ, բայց թերևս, անհամեմատ ավելի ճիշտ ու պատմականորեն պատճառաբանված կլիներ նախկին՝ Թեժառույգ ձևի վերականգնումը։ Կարծում ենք, այս առիթով երկրորդ կարծիք չի կարող լինել։

Կամ՝ Թալինի շրջանում է գտնվում հայկական՝ դարձյալ հինավուրց գյուղերից մեկը, որը հիշատակել են մեր մի քանի պատմիչներ, և տվել են միևնույն «Կոթ» անվանումը։ Թուրքական տիրապետության ժամանակ հարցը ծիծաղահարույց կերպարանք ընդունեց։ Պարզվեց, որ թուրքերը գյուղի անունը կարող են արտաբերել բառասկզբի Կ-Գ-ի փափկացումով միայն, որի հետևանքով էլ ստացվում էր անպատշաճ ու անթույլատրելի բառ։ Այս պատճառով գյուղին տրվեց «Ադեյաման» (Սարսափելի անուն) անվանումը, որը մնաց ընդհուպ մինչև 1948 թվականը։ Եվ այս դեպքում էլ, «Ադեյամանը» փոխելիս, դարձյալ թույլ տրվեց նույն սխալը։ Նախկին, պատմական «Կոթ»-ը վերականգնելու փոխարեն, գյուղը, չգիտես ինչու, ստացավ «Գառնահովիտ» անունը։ Ծագում է նույն հարցը. թվում է, որ նման մոտեցումը միայն սխալի հետևանք կարող է լինել։

Նման օրինակներ կարելի է էլի բերել, սակայն թվում է, թե ասվածն էլ բավական է այն շատ հասարակ եզրակացությանը հանգելու համար, որ Հայաստանում գտնվող օտարազգի տեղանունները փոխելիս, պետք է աշխատել, ըստ հնարավորին, վերականգնել նրանց նախկին, պատմական անվանումները։

Այս կապակցությամբ մի հարց էլ, և ավարտենք։

Առկա են մի շարք տեղանուններ էլ, որոնք անցնելով դարերի ու տասնամյակների միջով, աղավաղվել են, աղճատվել և այդպես աղճատված, այսինքն՝ սխալ ձևով էլ կիրառվում են այժմ։ Հնուց անտի, հայերեն գրվել ու գործածվել են Կապան, Կորես, Ապարանք, Արզական, Կարս, Նախճավան, Կարկառ, Կամախ և ուրիշ այսպիսի անուններ, որ աղավաղվելով, հիմա դարձել են Ղափան, Գորիս, Աբարան, Արզաքյան, Ղարս, Նախիջևան, Գյառգյառ, Գյամախ (նաև՝ Քյամախ)։ Ժամանակը չի՞ պայքարել նաև այս կարգի երևույթների դեմ և ուղղել Հայաստանի քարտեզի վրա գտնվող տեղանունների այդօրինակ աղճատումները։

Երեկոյան Երևան, 1983, օգոստոսի 26, № 197